# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2018թ. մարտի 12-14 Շվեցիարիայի Համադաշնություն (ք.Ժնև) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Կարեն Թամազյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

ք. Ժնև, Շվեցիարիայի Համադաշնություն, 2018թ. մարտի 12-14-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ)

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Առևտրի համաշխարհային կազմակերպության Պետական գնումների համաձայնագրի (ԱՀԿ ՊԳՀ WTO GPA) հասանելիություն, իրականացում և նոր գործիքներ» թեմայով աշխատաժողովին

6. **Քննարկված թեմաները՝**

✓ ***Առևտրի համաշխարհային կազմակերպության Պետական գնումների վերանայված համաձայնագիր (ԱՀԿ ՊԳՀ) – համաձայնագրի հիմնական կարգավորումները և ծածկույթը: ՊԳՀ հասանելիություն. շուկայի մուտքի հնարավորություններ, էլեկտրոնային գնումներ և սիներգիզմ:***

ԱՀԿ քարտուղարության և ՎԶԵԲ ներկայացուցիչները հակիրճ ներկայացրեցին Պետական գնումների վերանայված համաձայնագիրը գլոբալ միջավայրում, համաձայնագրի հիմնադրույթները և հիմնական կառուցվածքը: Անդրադարձ կատարվեց նաև ՊԳՀ վերանայված համաձայնագրի և ազգային գնումների ռեժիմների համապատասխանության ապահովման անհրաժեշտությանը: Քննարկման արդյունքում կարևորվեց ՊԳՀ վերանայված համաձայնագրի շրջանակներում պոտենցիալ շուկաների մուտքի հնարավորությունները, էլեկտրոնային ՊԳՀ-ների առցանց շուկայի հասանելիության վերաբերյալ տեղեկատվության կիրառումը որպես շուկայի մուտքի հնարավորությունների բացահայտման ռեսուրս:

✓ ***Բաց պայմանագրային փվյալների միջազգային ստանդարտի վրա հիմնված ԱՀԿ ՊԳՀ հաշվետվողականության գործիքը, վիճակագրության հավաքագրման և հաշվետվողականության նոր մոտեցումներ:***

Քննարկումների շրջանակներում ներկայացրել եմ Հայաստանում էլեկտրոնային գնումների բնագավառում իրականացված բարեփոխումները, էլեկտրոնային գնումների համակարգի բարեփոխումների ներդրման քաղաքական հիմնախնդիրները: Մասնավորապես, կարևորել եմ ՀՀ կառավարության կողմից քաղաքական կամքի դրսևորման արդյունքում պետական գնումների համակարգում ձեռնարկած օրենսդրական բարեփոխումները: Աշխատաժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրեցի այն կարևորագույն փաստի վրա, որ 2016 թվականին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի մշակման փուլում հաշվի են առնվել պետական գնումների բնագավառում ՀՀ ստանձնած բոլոր միջազգային (այդ թվում՝ ԱՀԿ ՊԳՀ և ԵԱՏՄ համաձայնագրերի շրջանակներում) պարտավորությունները: Միևնույն ժամանակ, շեշտադրում կատարեցի այն հանգամանքի վրա, որ ձեռնարկված բարեփոխումների արդյունք է հանդիսացել էլեկտրոնային գնումների համակարգի ներդրումը, որը մեծապես նպաստել է պետական գնումների թափանցիկության, հաշվետվողականության և փողի արժեքի ապահովմանը, ինչն իր հերթին կայուն տնտեսական աճի ապահովման, աղքատության մակարդակի կրճատման և առհասարակ հանրային ծախսերի արդյունավետ կառավարման կարևորագույն նախապայման է: Վերոգրյալի հիմնավորումն է հանդիսանում այն, որ 2016 թվականից սկսած բոլոր մրցակցային գնումները, ինչպես նաև 2017 թվականից բոլոր մեկ անձից գնումները և գնանշման հարցումները իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգով:

ՀՀ կառավարության քաղաքական կամքի դրսևորման հերթական ձեռքբերում է էլեկտրոնային գնումների համակարգի 3 մոդուլների ներդրումը՝ գնումների պլանավորում, հաշվետվողականություն և պայմանագրերի կառավարում: Վերջինս մեծապես նպաստել է պոտենցիալ կոռուպցիոն ռիսկերի կանխման գործիքների ներդրմանը:

Աշխատաժողովի թեմատիկայի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության պատվիրակների կողմից ներկայացվել է նաև էլեկտրոնային գնումների հաշվետվողականության և վերլուծական համակարգը. ԱՀԿ ՊԳՀ հաշվետվողականության գործիքը:

Արդյունքում, աշխատաժողովի ընթացքում բարձր է գնահատվել ՀՀ-ում ներդրված պետական գնումների համակարգը, ինչպես նաև էլեկտրոնային համակարգը: ԱՀԿ և ՎԶԵԲ-ի ներկայացուցիչների կողմից շեշտվեց, որ վերջիններս ապահովում են միջազգային լավագույն գործելակերպին համապատասխան «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական ակտերով սահմանված ընթացակարգերի ավտոմատացման աշխատանքները: Համակարգը կարող է համարվել աշխարհում և տարածաշրջանում լավագույն փորձի օրինակ: Նշվեց նաև ՀՀ-ում բաց պայմանագրային տվյալների միջազգային ստանդարտի հիման վրա պետական գնումներով ձևավորված գների վերլուծության էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

ԵԱՏՄ, Ղազախստանի և Ղրղզստանի Հանրապետության պատվիրակները հանդես են եկել բաց պայմանագրային տվյալների միջազգային ստանդարտի կիրառման հիմնախնդիրների, փորձարկման արդյունքների և հիմնական անելիքների վերաբերյալ զեկույցներով: Մոլդովայի մասնակիցները ներկայացրել են բաց պայմանագրային տվյալների միջազգային ստանդարտի վրա հիմնված թվային պետական գնումների ցիկլը:

- ✓ ***ԱՀԿ ՊԳՀ և ԵԱՏՄ համաձայնագրեր. երկու համաձայնագրերի ներդրման հիմնախնդիրները:***

ԱՀԿ քարտուղարության և ՎԶԵԲ պատվիրակները ներկայացրեցին ԱՀԿ ՊԳՀ և ԵԱՏՄ համաձայնագրերի պարտադիր պահանջները, երկու համաձայնագրերի իրականացման խնդիրները, գործնական լուծումները և հիմնական անելիքները: Մասնակից երկրների ներկայացուցիչները ներկայացրեցին և ընդհանուր քննարկվեց երկու փաստաթղթերի ներդրման մարտահրավերները և/կամ փորձը: Վերջինիս շրջանակներում ներկայացվել է նաև Հայաստանում երկու համաձայնագրերի, ներդրման մարտահրավերները և/կամ փորձը: Արդյունքում աշխատաժողովի մասնակիցները պատկերացում կազմեցին ՀՀ-ում էլեկտրոնային գնումների համակարգի բարեփոխումների ընթացքի, հիմնական ձեռքբերումների և հետագա քայլերի վերաբերյալ:

Ներկայացված թեմաները բավական արդիական են և անհրաժեշտ է քայլեր իրականացնել՝ գնահատելու ՀՀ-ում կիրառման դեպքում դրանց պոտենցիալ օգտակարությունը:

**7. Գործուղվողը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյան

**8. Ստորագրությունը, ամսաթիվը**

16.03.2018թ.